

ինչպէս «անմիջապէս և մօտիկ կերպով կարելի է լինում ծանօթանալ հայրենի հնութիւններին, տեղերին, սրբ. վայրերին ևլն, որոնք միանգամայն կրթում են աշակերտներին հայրենասիրական և ճշմարիտ կրօնական դպացմունքների մէջ»: Եղած փորձերը ցոյց են տալիս որ այնքան էլ թանկ չեն նստում աշակերտներին վրայ այդ դրօսանքները: Այս տարի Վիտերի սեմինարիայի աշակերտները ու Սինօդի թոյլտուութեամբ ճանապարհորդելով Վօլգայի վրայով, Կովկասում և Ղրիմում բաւական երկար ժամանակ իւրաքանչիւրը ծախս ունենում է ընդամենը 20 ռ. Աշակերտներից յետ չեն մնում և աշակերտուհիները: Կիևի թեմական դպրոցի 25 աշակերտուհիներ իրենց դաստիարակչուհիների հետ նոյն նպատակով ճանապարհորդել է Ռուսաստանի հիւսիսում: Յուլիսի սկզբներին Կիևի Երկրորդ թեմ. դպր.-ից ելնում են 40 աշակերտուհի և ճանապարհորդում Մոսկուայի, Նորոսլավի, Կազանի, Վօրօնէժի ևլն նահանգներում:

ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՅԻ

Յուլիսի 7-ին (հ. տ.) Հռովմից խփուած մի հեռագիր կաթոլիկ աշխարհին գուժեց Լեոն ԺԳ-րդ պապի մահը: Այդ օրը կէսօրեց յետոյ ու Պետրոսի յաջորդը ծանր հիւանդութիւնից յետոյ կնքեց իւր երկրաւորը: Լեոն ԺԳ-րդ խաղաղական մի հարուստ կալուածատիրոջ գաւաի էր. նրա մկրտութեան անունն էր Ժօաքինօ Պէդդի: Նա ծնուել է Կապրիում մարտի 1-ին 1810 թ.ին: Նա իր սկզբնական կրթութիւնը ստացաւ Յիսուսեանների դպրոցում, ապա մօր մահուանից յետոյ՝ անցնելով Հռովմ իւր մօրեղբօր մօտ՝ մանում է Հռովմի համալսարանը, որտեղ նա մեծ յաջողութեամբ առաջ տանելով իւր պարտաւճիւրները, 1834 թուին արժանանում է աստուածաբանութեան դօկտօրի ցիւանական ատիւնանին: 1837 թուին ձեռնագրութեամբ է քահանայ և անմիջապէս կարգուում է վատիկանի մէջ պաշտօնի: Այնուհետև նշանակուում է Բրիւսելում պապական նուիրակ. որ վաւրեց մինչև 1846 թիւը: Ապա նոյն թուին նշանակուում է Պէրուզէի թեմի արքեպիսկոպոս, այս պաշտօնի մէջ նա մնաց մինչև պապական աթոռ Բարձրանալը: Նա իբրև Պէրուզէի թեմի արքեպիսկոպոս, իւր արթուն և խոհուն կառավարչութեան շնորհիւ մեծ հեղինակութիւն և համակրութիւն վաստակեց:

1878 թուին Պիոս Թ-րդ մահուանից յետոյ ծիրանաւորներն ժողովը նրան ընտրեց պապ: Լեոն ԺԳ-րդ, իբրեւ հեռատես և քաղաքագէտ անձնաւորութիւն, անշուշտ նշանաւոր տեղ է բռնելու պապերն պատմութեան մէջ: Մինչև նրա պապ ընտրուելը եւրոպական պետութիւններից Գերմանիան խիստ լարուած և թշնամական յարաբերութեան մէջ էր իւր սահմաններում ապրող կաթոլիկներն և նրանց կարգերն հետ: Լեոն ԺԳ-րդին յաջողութեց պրուսական կառավարութեան խիստ վերաբերմունքը մեղմացնել, որ միանգամայն զգալի դարձաւ մանաւանդ գերմանական կայսեր 1888 թուին վատիկանին արած այցելութիւնից յետոյ: Նա իւր քահանայապետութեան բոլոր տարիներում, որպէս բարձրագոյն դուռն և դէտ կաթոլիկ եկեղեցու, աշխատում էր նրա պայծառութեան և յաջողութեան համար: Այն շարժումները, որոնք վերջին տարիներում առաջ եկան Սպանիայում կաթոլիկութեան դէմ, անշուշտ վնասներ պատճառեցին նրան, բայց դրա փոխարէն կաթոլիկ եկեղեցին մեծ յաջողութիւն ունեցաւ արեւելքում:

— Պապի բնօրութեան եղանակը. — Պապերն ընտրութիւնը պատմութեան ընթացքում շատ յեղեղուկ վիճակ է ունեցել: Նրանք ընտրուել են երբեմն թէ ժողովրդից և թէ՛ հոգեւորականութիւնից, պապ են կարգել նաև աշխարհական — քաղաքական պետերը ինքնիշխան կերպով առանց ընտրութիւն կատարելու: Թէ պապերը զանազան ժամանակներում պատմութեան մէջ ինչ եղանակով և ինչ ձևով են ընտրուել, կաշխատենք համառօտակի առաջ բերել «Արարատ»-ի ընթերցողներն համար:

Առաջին երեք դարերում պապերն ընտրուում էին հոգեւորականութեան և ժողովրդի կողմից: Բայց չորրորդ դարից սկսած այդ իրաւունքը իրենց են սեփականում քաղաքական պետերը՝ թագաւորները: Այսպէս 483 թուին Օգոսկըր սահմանեց, որ առանց թագաւորական համաձայնութեան չէր կարող ո՛չ ոք պապական աթոռը բարձրանալ: Օգոսկըրի այս սահմանումը սակայն Թէոդորիկի թագաւորութեան առաջին տարիներում, սրա դէպի եկեղեցական և կրօնական գործերը ցոյց տուած անտարբերութեան շնորհիւ, մինչ անյն աստիճան թուլանում է, որ պապերը սկսում են հետամուտ լինել ընտրութեան իրաւունքը վերագրել հոգեւորականներից: Թէոդորիկ, նկատելով այդ հանգամանքը, խլում է նրանցից ընտրութեան վերաբերեալ ամէն մի իրաւունք և արտօնութիւն և ինքը իւր կողմից, առանց ընտրութիւն կատարել տալու, պապ է նշանակում Ֆելիկս Գ-րդին (526 — 530 թ.): Իսկ այնուհետեւ բուն

Միջին դարերում պապերի ընտրութեան հարցը երկար ժամանակ մեծամեծ վէճերի առարկայ է դառնում: Երբեմն բիւզանդական կայսրներն էլն սրան կամ նրան պապ նշանակում: Կայսերական միջամտութիւնը այդ խնդրում սակայն աւելի դժուարեցրեց պատայայտուեցաւ Կարլոս Մեծի ժամանակից սկսած: 9-րդ դարից սկսած մինչև 13-րդ դարը պապերի ընտրութեան հարցը գերմանական կայսրների և պապերի մէջ երկարու ձեռք հոռու առարկայ դարձաւ: Երբեմն յաջողութիւնը մընում էր կայսրների և երբեմն էլ պապերի կողմը մինչև 1274 թուականը, երբ Գրիգոր Ժ-րդ պապը Լիոնի ժողովով վերջնականապէս որոշեց պապերի ընտրութեան եղանակը: Այս ժամանակից սկսած, թէև առաջ էլ է եղել, պապերն ընտրում են ծիրանաւորների ժողովով, որոնց թիւը հասնում է 70-ի: Լիոնի ժողովի որոշման համեմատ կարող էր իւրաքանչիւր կատարեալ հասակն առած կաթոլիկ պապ ընտրուել առանց ազգային խտրութեան: 1478 թուից սկսած կարող էր միայն ծիրանաւորը պապ ընտրուել, իսկ 1522 թուից ընտրեալ պապը անպայման Իտալացի պիտի լինի, որ և անխախտ պահւում է մինչև այսօր:

Պապի ընտրութիւնը կատարուում է կոնկլաւում (պապ ընտրելու համար որոշուած սենեակ) հետեւեալ կերպով: Պապի մահունից յետոյ տասերորդ օրը ծիրանաւորները հաւաքուում են ս. Պետրոսի մայր եկեղեցում պատարագին ներկայ լինելու համար—*de spiritu sancto*—: Պատարագից յետոյ ծիրանաւորները մեծ շքով և հանդէսով դնում են Սիկստոս Գ-րդի մատուռը, որտեղ նրանք երդումն են տալիս, որ իրենք պապի ընտրութեան ժամանակ կվարուեն ընտրութեան օրէնքների համաձայն: Երդման արարողութիւնից յետոյ ընտրութեան մասնակցող ծիրանաւորները վերադառնում են Վատիկան և փակուում իրենց համար պատրաստուած խցերում, որոնց պատերը մետաքսեայ կտորներից շինուած լինելով, ամէն մի արտասանուած խօսք լսուում է հարեան խցում: Այդ ժամանակ ծիրանաւորները դրսի հետ ամենեւին յարաբերութիւն չեն կարող ունենալ և նրանց մօտ մանեւն արգելուած է, դռները փակուած են լինում կրկնակի կողպէքներով: Մի խօսքով ծիրանաւորները հնարաւորութիւն չունին ամենեւին դրսի հետ հաղորդակցութեան մէջ լինել մինչև ընտրութեան վերջը: Վերջին ժամանակներումն ընտրողական նիստերը գումարուում են ծիրանաւորների մատուռը զնալուց յետոյ երրորդ օրը: Չայները տրուում են զրաւոր կերպով փակ ծրարի մէջ. ընտրութիւնը վաւերական է, երբ ընտրեալը ստացել է մասնակցողների 2/3 ձայնը: Ընտրութիւնը սկսուում է

արարողապետի տուած նշանով, որից յետոյ առաւօտեան ժամի 7-ին ծիրանաւորները նստում են ժողովին: Եթէ այնպէս է պատահում, որ քուէարկուողներից ո՛չ մէկը չի ստանում ձայների առաւելութիւն, այդ դէպքում ընտրութիւնը շարունակուում է ճաշին: Եւ եթէ այդ անգամ ձայները բաժանուում են և ո՛չ ոք ձայների մեծամասնութիւն չի ստանում, այդ դէպքում կատարուում է նոր ընտրութիւն հետևեալ օրը: Ֆրանսիան, Աւստրիան և Սպանիան միայն իրաւունք ունին բողոքելու այն ընտրող ծիրանաւորների դէմ, որին նրանք չէին կամենալ պապ ունենալ: Ժողովին մասնակցող այս կամ այն ծիրանաւորների միջոցով գաղանի կերպով և այդ բողոքը կարող է միայն մի անգամ լինել, այն էլ քուէրարկուող ծիրանաւորների ձայների 2/3-ը ստանալուց առաջ: Ընտրութիւնից անմիջապէս յետոյ նորընտիր պապը տալիս է այն անունը, որ, նա կկամենար կրել: Այնուհետև հանելով նա ծիրանաւորական զգեստը, հագնում է պապի զգեստ և մատուռի սեղանի առաջ ընդունում է առաջին շնորհաւորութիւններն ընտրող ծիրանաւորների կողմից, որոնք համբուրում են նորընտիր պապի ոտքը, իսկ պապը համբուրում է նրանց երեսը ի նշան խաղաղութեան: Այնուհետև նա մատուռի պատշգամբից երևում է ժողովրդին, ապա գլխին դնելով խոյրը մատուռի մէջ ընդունում է ժողովրդի շնորհաւորութիւնները: Սրանից յետոյ մեծ հանդէսով պապը իջնում է ս. Պետրոսի եկեղեցին պատգարակի վրայ նստած, որտեղ նա ընդունում է արդէն երրորդ անգամ շնորհաւորութիւններ: Այստեղ նրան ներկայանում են նաև օտար պետութեանց ներկայացուցիչները—դեսպանները: Ապա մասնադրելով իր անդրանիկ առաքելական օրհնութիւնը ժողովրդին, արձակում է նրան ի խաղաղութիւն: Ընտրութիւնից մի քանի օր յետոյ նորընտիր պապը օծուում է, որից յետոյ մանում է նա իր իրաւական սահմանի մէջ:

— Յուլիսի 18-ից Հռովմից արուած մի հեռագիր հետևեալն է հաղորդում: Բոլոր ծիրանաւորները կէսօրից յետոյ ժամը 5-ին հաւաքուեցին Վատիկանի ս. Պօղոս եկեղեցին և հանդիսաւոր թափուրով գլխեցին դէպի Սիկստոսի մատուռը, որտեղ տեղի են ունենում կոնկլաւի նիստերը: Ծիրանաւորները և կոնկլաւին մասնակցող բոլոր անձինք երդումն տուին: Մութն ընկնելուց յետոյ կոնկլաւի արարողապետը սեփական ձեռքով փակեց երկու դռնաւոր դռները: Կոնկլաւում ժողովուել են 365 հոգի, զրանց թուում 62 ծիրանաւոր և 40 արքեպիսկոպոս և եպիսկոպոս: Ժամը 11-ից 45 անցած առաջին անգամ մատուռի կտրա-

նը ծուխ երևաց ընտրողական թերթիկներն այրելուց: Մերանա-
որներն օրական երկու նիստ են ունենում՝ ճաշից առաջ և
ետոյ: Ամէն նիստը տեւում է երկու ժամ: Պապ ընտրուեց վե-
նեակի պատրիարք կարգինալ Սարգօ, որ ընդունեց Պետո X
անունը:

ԵԿԵՂԵՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ.

Օրհնութիւն սրբալոյս Միւռոնի. Վեհափառ Հայրա-
պետը բարեհաճեց անօրինելի որ սրբալոյս իւղի օրհնութիւ-
նը կատարուի Սղոսատոսի 24-ին՝ փոխանակ Սեպտեմբերի 28-ին,
ինչպէս որ նախապէս կարգատրուած և յայտարարուած էր:

Ժամանակի փոփոխութիւնը անակնկալ էր: Հրաշափառ
հանդէսը սկսուեց և կատարուեց ի ներկայութեան 14 արք-
եպիսկոպոսների, եպիսկոպոսների և բազմաթիւ վարդապետ-
ների. հաւաքուեց ուխտաւորների մեծ բազմութիւն: Հան-
դիսի նախորդ երեկոյեան, որ էր կիրակնամուտ, տեղի ունե-
ցաւ գիշերային հսկում, իսկ Քւս օրը ս. պատարադին՝ սըր-
բալոյս իւղի օրհնութիւնը: Պատարագիչն էր Տ. Արիստակէս
արքեպիսկոպոս Սեդրակեանը, իսկ հանդիսադիրը՝ ազգիս
Վեհափառ Հայրապետը: Ս. Պատարագն արդէն սկսուած էր
երբ Նորին Ս. Սոմութիւնը զգեստաւորուած հանդիսաւոր
կերպով տաճար իջաւ՝ իւր շուրջն ունենալով տաճանակու
եպիսկոպոս, որոնք նոյնպէս զգեստաւորուած էին օրուայ
հանդիսին վայել շքեղութեամբ, շուրջառաջդիտ վարդապետ-
ներ և ուխտաւոր քահանաներ:

Ս. Պատարագի մատուցումը ընդհատուեց Ոգջոյն-ից ա-
ռաջ և սրբազանագոյն Հայրապետը գլուխ անցած եպիսկո-
պոսաց դասին սկսեց ս. Միւռոնի օրհնութեան ահեղ խոր-
հուրդը: Հայրապետը աջ ձեռում բռնած ունէր կենաց վայ-